

1804. — Ս. Խաչի սեղանին հիւսիսային անկիւնը, Աւազանին կից փոքրիկ սեղանին յիշատակարանը, խորհրդանշանի կամ զինանշանի մը շուրջը.

“Կանգնեցաւ սուրբ սեղանս ի պատիւ սուրբ / Նիկողայոս Սքանչելագործ հայ/րապետին. արդեամբք նոր նախիջ / վանցի Աղանկեան Գէորգ աղայ / ին կենդանեաց եւ ննջ / եցելոց ամի ՏՆ / 1804 եւ ի թիւն / հայոց ՌՄԾԳ / եւ ի Մայիսի ԺԴ (= 14) ի բարին |,,”

1807. — Մկրտութեան պատկերին յիշատակարանը, որ Ս. Կարապետի փոքրիկ խորանէն փոխադրուած է Սուրբ Խաչ եւ նորաշէն Աւազանին ներքին ճակատը դրուած է:

“Յիշատակ է նորաշէն պատկերս խորանու հանգուցեալ միւթէվէլի մահտեսի վարդերես ամիրային եւ որդւոյն Յակոբճան աղային, եւ փեսայի սոցին մահտեսի Գէորգ ամիրայի որդւոյ միւթէվէլի Գրիգոր ամիրային եւ կենակցին եւ որդւոյն Պողոս աղային, եւ համայն կենդանեաց եւ ննջեցելոց նոցին. ամի ՏՆ. 1807 Յունիս Ա., (= 1): “Նկարեալ ի ներսէս ղալէն”:

1820. — Լքուած տախտակի կտորի մը վրայ (մեծութիւն 61.5×9.3), հին խաչկալի մը մնացորդը.

“Յիշատակ է խաչկալս խալաթիացի մահտեսի ախտեր Սարգսին կենդանեաց եւ ննջեցելոց. ի թուին ՌՄԿԹ. Ապրիլի ԺԲ.,,”

1830. — Խալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ “դպրատան” կնիքը.

Ղլթ / սը Լուսա / Եկեղեցւոյն / ղալրատան / 1830.

1834. — Լքուած մարմարի մը վրայ.

“Լրացաւ շինութիւն սուրբ խաչ եկեղեցւոյն աշխատութեամբ Խալաթիայու համայն ընոնակիր եղբարոց որք ձրի կրեցին զփայտս եւ զքարինս սուրբ Եկեղեցւոյ վասն արեւշատութեան կենդանեաց եւ վասն հոգւոց համօրէն ննջեցելոց. 1834 Յուլիս 30.,,”